

ԲՈՒԺՈՒՄ Է ՎԱՐԴԱՆԱՆՑԸ

ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՆՎԱՏՈՒՄՆԵՐԸ
ԱՌՕՐՅԱ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ



ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՒԺՈՒՄ Ե ՎԱՐՂԱՆԱՆՑԸ

ԱՊԱՑՈՒՑՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ
ՆՎԱԾՈՒՄՆԵՐԸ ԱՌԾՐՅԱ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ

Գարուշյուն Մանգոյանի խմբագրմամբ

Երևան
2022

Հեղինակների խումբ

- **Հարություն Մանգոյան**
Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնի գլխավոր տնօրեն
- **Մարիամ Բաղդասարյան**
Բժիշկ-ներզատաբան, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- **Մարի Ղասաբոլյան**
Բժիշկ-ներզատաբան, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- **Անահիտ Ժամհարյան**
Բժիշկ-ակնաբույժ, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- **Լիլիթ Մարության**
Բժիշկ-մանկաբույժ, «Վիզմոր Կլինիկ» իմունիզացիայի ծառայության ղեկավար
- **Անահիտ Ղուկասյան**
Բժիշկ-մանկաբույժ, «Վարդանանց» ՆԲԿ-ի մանկաբուժության ծառայության ղեկավար
- **Հռիփսիմե Պողոսյան**
Բժիշկ-նյարդաբան, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- **Աստղիկ Սուջյան**
Բժիշկ-նյարդաբան, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- **Քրիստինե Հարությունյան**
Բժիշկ-գաստրոէնտերոլոգ, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն
- **Անի Ալեքսանյան**
Բժիշկ-սրտաբան, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոն

Հեղինակ խմբագիր՝ Հ. Ն. Մանգոյան

«Վարդանանց» նորարարական բժշկական կենտրոնի գլխավոր տնօրեն, Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի հեղինակական և շարունակական կրթության կենտրոնի անէսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի ինտենսիվ թերապիայի բաժանմունքի զիտական ղեկավար

Լեզվաբան խմբագիր՝ Անահիտ Հայթայան

Բ 948 Բուժում է Վարդանանցը / Ապացուցողական բժշկության նվաճումները առօրյա պրակտիկայում / Հ. Մանգոյան և ուրիշ. -Եր.: Հեղ. հրատ., 2022.-628 էջ:

Ներկա աշխատանքը ամփոփում է ապացուցողական բժշկության վրա հիմնված տարածված հիվանդությունների և ախտաբանական վիճակների ախտորոշման և բուժման արդի մոտեցումները: Գործնական բժշկին տրամադրվում են կլինիկական որոշման աջակցման հստակ ընթացակարգեր:

Խորհուրդ է տրվում ընտանեկան բժիշկներին, թերապևտներին, թոքաբաններին, հոդաբաններին, նյարդաբաններին, ներզատաբաններին, սրտաբաններին, մանկաբույժներին, վիրաբույժներին, ուրոլոգներին, մաշկաբաններին և ակնաբույժներին:

ISBN 978-9939-0-4085-1

© «ԱՐԻՆՏԵՐԼԵՎ» ՍՊԸ, 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԵՐԱՊԻԱ.....	11
ՍՈՒՐ ԲՐՈՆԽԻՏ	15
ՍՈՒՐ ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	18
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՍՈՒՐ ԸՄՊԱՆԱԲՈՐԲԵՐ	22
ԵՐԿԱՄՆԵՐԻ ՍՈՒՐ ՎՆԱՍՈՒՄ	27
ԵՐԿԱԹԴԵՖԻՑԻՏԱՅԻՆ ՍԱԿԱՎԱՐՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ.....	32
ԱՆԿԻԼՈՋԱՅՆՈՂ ՍՊՈՆԴԻԼԻՏ	36
ԲՐՈՆԽԻԱԼ ԱՍԹՄԱ.....	42
ԱՆԱԽՏԱՆՇԱՆԱՅԻՆ ԲԱԿՏԵՐԻՈՒՐԻԱ	47
ԿՐԾՔԱԳԵՂՁԻ ՔԱՂՅԿԵՂ.....	50
ԲՐՈՆԽՈՒԷԿՏԱՋ	62
ԱՐՏԱՀՈՍՊԻՏԱԼԱՅԻՆ ԹՈՔԱԲՈՐԲ.....	69
ԴԱՏԱԿԱՅԻՆ (ԿԱՐՊԱԼ) ԹՈՒՆԵԼԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ.....	78
ՑԵԼՅՈՒԼԻՏ	83
ԽՈԼԵԼԻԹԻԱՋ.....	90
ՔՐՈՆԻԿ ՀԱՋ	94
ՔՐՈՆԻԿ ՀՈԳՆԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ.....	99
ԿԼՈՍՏՐԻԴԻՈՒՄ ԴԻՖԻՑԻԼԵ ՎԱՐԱԿ	104
ՑԵԼԻԱԿԻԱ.....	108
ՍՈՒՐ ՆԱՋՈՖԱՐԻՆԳԻՏ.....	111
ՔՐՈՆԻԿ ՓՈՐԿԱՊՈՒԹՅՈՒՆ.....	115
ԿԻՍՏՈՋ ՖԻԲՐՈՋ.....	119
ՔՐՈՆԻԿ ՓՈՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	123
ԴԻՎԵՐՏԻԿՈՒԼԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ.....	126
ՎԱՐԱԿԱՅԻՆ ՄՈՆՈՆՈՒԿԼԵՈՋ	133
ՖԻԲՐՈՄԻԱԼԳԻԱ	140
ԱՆՀԱՅՏ ԾԱԳՄԱՆ ՏԵՆԴ	143
ԳԱՍՏՐԻՏ	147
ԳԱՍՏՐՈՒՋՈՖԱԳԵԱԼ ՌԵՖԼՅՈՒՔՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ	151
ՀՈԴԱՏԱՊ	155
ԳՈՏԵՎՈՐՈՂ ՈՐՔԻՆ	160
ԳՐԳՈՎԱԾ ԱՂՈՒ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ	165
ԳՐԻՊ	170
ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 2019 (COVID 19)	179

ԴԻՍՊԵՊՍԻԱ.....	187
ՔՐՈՆԻԿ ՑԱՎ.....	190
ՀՈԴՎԱԾՈՏԱՆԻՆԵՐԻ ԽԱՅԹՈՑՆԵՐ	197
ԾՆԿԻ ՑԱՎ ԿԱՄ ԾՆԿԱՀՈԴԻ ՕՍԹԵՈԱՐԹՐԻՏ	202
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԼՅԱՐԴԻ ՈՉ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ՃԱՐՊԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ.....	207
ԾԱՅՐԱՄԱՍԱՅԻՆ ԶԱՐԿԵՐԱԿՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ	211
ՊՈՐՏԱԼ ՀԻՊԵՐՏԵՆԶԻԱ.....	217
ՓՍՈՐԻԱՏԻԿ ԱՐԹՐԻՏ.....	220
ՌԵՎՄԱՏՈՒԴ ԱՐԹՐԻՏ	223
ԽՈՑԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ.....	227
ՔՆԻ ՕԲՍՏՐՈՒԿՏԻՎ ԱՊՆՈԷ	232
ՍՏՈՐԻՆ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԱԿՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ	237
ՎԻՏԱՄԻՆ D ԴԵՖԻՑԻՏ	241
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ.....	244

ՍՐՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 251

ՍՐՏԱՅԻՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	253
ՍՈՒՐ ԿՈՐՈՆԱՐ ՀԱՄԱԽՏԱՆԻՇՆԵՐ (ՍՍՀ) ԱՌԱՆՑ ST ԷԼԵՎԱՅԻԱՅԻ ԱՆԿԱՅՈՒՆ ՍՏԵՆՈԿԱՐԴԻԱ ԵՎ NSTEMI.....	262
ՆԱԽԱՍՐՏԵՐԻ ՇՈՂԱՑՈՒՄ ԵՎ ԹՐԹՈՒՈՒՄ	270
ԿԱՐՈՏԻԴ ՍՏԵՆՈՉ	278
ԶԱՐԿԵՐԱԿԱՅԻՆ ԳԵՐՃՆՇՈՒՄ/ՀԻՊԵՐՏԵՆԶԻԱ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.....	284
ՆՅԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	293
ԳԵՆԵՐԱԼԻԶԱՑՎԱԾ ՏԱԳՆԱՊԱՅԻՆ ԽԱՆԳԱՐՈՒՄ.....	295
ԴԵՊՐԵՍԻԱ (ԸՆԿՃԱԽՏ)	299
ՍՏՈՐԻՆ ԳՈՏԿԱՑԱՎ (ԴՈՐՍԱԼԳԻԱ).....	306
ՄԻԳՐԵՆ.....	311
ՆԵՅՐՈՊԱԹԻԿ ՑԱՎ.....	317
ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԻՊԻ ԳԼԽԱՑԱՎ	322

ՔԿՍ 329

ՍՈՒՐ ԿՈԿՈՐԴԱԲՈՐԲ.....	331
ՍՈՒՐ ԸՄՊԱՆԱԲՈՐԲ	335
ԱՏՐՈՖԻԿ ՌԻՆՈՍԻՆՈՒՍԻՏ	340
ՔՐՈՆԻԿ ՊՈԼԻՊՈՉ ՌԻՆՈՍԻՆՈՒՍԻՏ.....	343
ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՈՒՍ.....	347

ԱԿԱՆՋԻ ԱՂՄՈՒԿ (ՏԻՆԻՏՈՒՍ)	351
ՄԱՆԿԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ	357
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՍՈՒՐ ՌԻՆՈՍԻՆՈՒՍԻՏՆԵՐ	359
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՄԻՋԻՆ ԱԿԱՆՋԻ ՍՈՒՐ ԲՈՐԲՈՔՈՒՄ.....	366
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՐՏԱՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ԹՈՔԱԲՈՐԲ (ԱՀԹ)	371
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ՎԻՐՈՒՍԱՅԻՆ ԼԱՐԻՆԳՈՏՐԱԽԵՆՈՐՈՆԵՍԻՏ (ԿՐՈՒՊԻ)	383
ՏՈՆՁԻԼՈՖԱՐԻՆԳԻՏ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ	387
ՎԵՐԻՆ ՇՆՉՈՒԴԻՆԵՐԻ ՎԱՐԱԿՆԵՐ (ՎՇՎ) ԵՐԵՒԱՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.....	392
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՈՒՐ ԵՎ ԿՐԿՆԱԿԻ ՕԲՍՏՐՈՒԿՏԻՎ ԲՐՈՆԵՍԻՏՆԵՐ (ՍՈՒԼՈՂ ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ).....	397

ՆԵՐՋԱՏԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ	405
ԱՌԻՏՈՒՄՈՒՆ ԹԻՐԵՈՒԴԻՏ.....	407
ԿՈՒՇԻՆԳԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ.....	410
ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ ՏԻՊ 2	415
ՀԻՐՍՈՒՏԻՋՄ.....	421
ՀԻՊԵՐԹԻՐԵՈՉ.....	425
ՀԻՊՈԹԻՐԵՈՉ.....	429
ՃԱՐՊԱԿԱԼՈՒՄ	432
ՕՍՏԵՈՊԵՆԻԱ ԵՎ ՕՍՏԵՈՊՈՐՈՉ.....	436
ՎԱՀԱՆԱՁԵՎ ԳԵՂՁԻ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐ	442
ՎԱՀԱՆԱՁԵՎ ԳԵՂՁԻ ՉԱՐՈՐԱԿ	
ՆՈՐԱԳՈՅԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	448

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԻՆԵԿՈԼՈԳԻԱ	453
ՈՉ ՆՈՐՄԱԼ (ԴԻՍՖՈՒՆԿՏԻՈՆԱԼ) ԱՐԳԱՆԴԱՅԻՆ ԱՐՅՈՒՆԱՀՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	455
ԱԴԵՆՈՄԻՈՉ.....	459
ԱՆՈՄԱԼ ՊԱՊ ԵՎ ՊԱՐԱՆՈՑԻ ԴԻՍՊԼԱԶԻԱ.....	462
ՎԱԳԻՆԻՏՆԵՐ.....	468
ԱՐԳԱՆԴԻ ՊԱՐԱՆՈՑԻ ԷԿՏՐՈՊԻՈՆ (ԷՐՈՉԻԱ).....	473
ԷՆԴՈՄԵՏՐԻՈՒՄԻ ՀԻՊԵՐՊԼԱԶԻԱ	475
ԿՐԾՔԱԳԵՂՁԵՐԻ ՖԻԲՐՈՉ ԿԻՍՏՈՉ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ	483
ԱՐԳԱՆԴԻ ՄԻՈՄԱՆԵՐ	489
ՁՎԱՐԱՆԻ ՊՈԼԻԿԻՍՏՈՉ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ.....	493

ԹՐՈՄՔՈՑԼԵՔԻԱՆԵՐԻ ՍԿՐԻՆԻՆԳԸ ՀՂԻՆԵՐԻ ՈՒ ԾՆՆԴԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ.....	498
ՆԵՐԱՐԳԱՆԴԱՅԻՆ ՊԱՐՈՒՅՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	505
ԱԿՆԱԲՈՒԹՈՒԹՅՈՒՆ	509
ԱՄԲԼԻՈՊԻԱ.....	511
ԴԵՂԻՆ ԲԾԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԴԵԳԵՆԵՐԱՅԻԱ	516
ԲԼԵՖԱՐԻՏ.....	521
ԿԱՏԱՐԱԿՏԱ	524
ԿՈՆՅՈՒՆԿՏԻՎԻՏ	529
ԴԻԱԲԵՏԻԿ ՈՒՏԻՆՈՊԱԹԻԱ.....	534
ԳԼԱՌԻԿՈՄԱ	541
ՈՒՎԵԻՏ	550
ՄԱՇԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	557
ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԵՎ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿՈՐՅԱԿՆԵՐ (ԱԿՆԵ ՎՈՒԼԳԱՐԻՍԻ)	559
ՀԵՏԱՆՑՔԱՍԵՌԱԿԱՆ ԳՈՐՏՆՈՒԿՆԵՐ ԿԱՄ ԿՈՆԴԻԼՈՄԱՆԵՐ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ	565
ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ԴԵՐՄԱՏԻՏ (ՀՊՈՒՄԱՅԻՆ ՄԱՇԿԱԲՈՐԲ).....	568
ՕՆԻԽՈՄԻԿՈՋՆԵՐ	571
ՎԻՐԱԲՈՒԹՈՒԹՅՈՒՆ	575
ԱՔԻԼԼԵՍՅԱՆ ՋԼԻ ՍՈՒՐ ՎՆԱՍՎԱԾՔ	577
ՀԵՏԱՆՑՔԻ ՃԱՔ	561
ՀԱՍՏ ԱՂՈՒ ՊՈԼԻՊ	584
ԱԴՀԵՋԻՎ ԿԱՊՈՍՈՒԼԻՏ	588
ԲՈՒՐՄԻՏ ԿԱՄ ՍԱԳԻ ԹԱԹԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ.....	592
ԿԱՊԱՆՆԵՐԻ ՁԳԱՎՆԱՍՈՒՄ ԵՎ ՄԿԱՆԱՋԼԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳԵՐԼԱՐՈՒՄ	595
ՈՒՐՈԼՈԳԻԱ	599
ՄԻՋԱՊԱՐԿԻ ՔԱՂՅԿԵՂ.....	561
ՇԱԳԱՆԱԿԱԳԵՂՁԻ ԲԱՐՈՐԱԿ ՀԻՊԵՐՊԼԱՋԻԱ	605
ՉԲԱՐԴԱՑԱԾ ՑԻՍՏԻՏ ԿԱՆԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ	611
ՍՈՒՐ ՑԻՍՏԻՏ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՇՐՋԱՆՈՒՄ	613
ՈՒՐՈԼԻԹԻԱԶ.....	616
ՊԻԵԼՈՆԵՖՐԻՏ	622

Մեր հարգելի գործընկերներին, ինչպես նաև սիրելի պացիենտներին է նվիրվում այս հավաքածուն:

Գիրքը, որ այժմ Ձեր ձեռքին է, «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնում ընդունված և առօրյա պրակտիկայում կիրառվող էլեկտրոնային տեսքով գործելակարգերի և ուղեցույցների տպագրական տարբերակն է:

Ուղեցույցների ստեղծման ճանապարհը երկարատև և աշխատատար էր: «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնը ստեղծվել էր բարձրորակ բժշկության տեսլականով՝ նպատակ ունենալով ապահովելու այնպիսի որակ, որն արտագնա բժշկական տուրիզմը կդարձնե անհիմաստ:

Միջազգային որակի ներդրման հրամայականը ստիպեց դուրս գալ անմիջական բժշկագիտության շրջանակներից և խնդրին նայել շատ ավելի լայն տեսանկյունից: Համակարգային այս մոտեցումն աստիճանաբար հասունացավ և իր վերջնական տեսքը ստացավ 2016 թվականին՝ որպես Հայաստանի առողջապահական բարեփոխումների առանցքային հիմնասյուն:

Ըստ էության, 2016-ի ամբողջ ռեֆորմը երեք նախագծի միասնություն էր.

ա. Կլինիկական գործելակարգերի և ուղեցույցների ներդրումը՝ որպես կայուն և մատչելի որակի հիմք: Գործելակարգերն ու ուղեցույցները պետք է հանդիսանալին որակի չափանիշ և կճառայեին որպես բուժման արժեքի հաշվարկման հիմք:

բ. Բժշկական գործունեության համընդհանուր թվայնացումը՝ միտված գրոյական թղթաշրջանառության սկզբունքի իրականացմանը:

Թվայնացումը հնարավորություն է ընձեռում բուժող բժշկին հասու լինելու պացիենտի ողջ պատմությանը և տվյալներին, ինչն էպես արագացնում է բուժման պրոցեսը և դարձնում այն համակողմանիորեն կշռադատված:

Ի լրումն այս սիներգետիկ արդյունքի՝ թվայնացման շնորհիվ բժշկական ցանկացած գործողություն հաշվառվում է դրա իրականացման պահին՝ կցվելով միասնական բազայում հաշվառված կոնկրետ ֆիզիկական անձին, ինչն անհնար է դարձնում հավելագրումներն ու մանիպուլյացիաները:

գ. Եվ, վերջապես, անցում բժշկական ծառայությունների դիմաց ապահովագրական վճարման ձևին:

Վերջին բաղադրիչը պացիենտի և բժշկական ծառայություններ մատուցողների միջև միջնորդների ինստիտուտն է: Ընդ որում, խիստ կարևոր է, որ միջնորդը շահագրգռված լինի իրականացնելու ծառայությունների մատակարարների կողմից ներկայացված վճարման հաշիվների առավելագույնս մանրակրկիտ, բայց և ժամանակին փորձագիտական վերլուծություն և, որ ամենակարևորն է, ֆինանսապես հետաքրքրված լինի արդյունքով:

Առանց զսպումների և հակակշիռների համակարգի, որի մի կողմում միջնորդի ֆինանսական արդյունքն է, իսկ մյուս կողմում՝ պետական լիազոր մարմինների կանոնակարգերը և նորմատիվները, միջնորդը կվերածվի սոցիալիստական տնտեսության օղակի՝ իր տխրահռչակ կարգախոսով. «Ընդհանուր է, ուրեմն ոչ մեկինն է»:

2018 թվականին նախագիծը տեղափոխվեց «Վարդանանց» նորարարա-



կան բժշկության կենտրոն, որտեղ և ծնվել էին ծրագրի առաջնային գաղափարները:

2018-ից ի վեր «Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնի անձնակազմի և ծրագրի անփոփոխ ղեկավար Հարություն Մանգոյանի ջանքերով ստեղծվել կամ տեղայնացվել են 137 գործելակարգեր, որոնք այսօր պատիվ ունեն ներկայացնելու ձեր ուշադրությանը:

Բոլոր գործելակարգերն ունեն ապացուցողականության 1a և 1b աստիճան:

Հաշվի առնելով, որ ձեռնարկը նախատեսված է ոչ միայն ուսանողների, դասախոսների և գործող բժիշկների համար, այլև, անկասկած, հետաքրքիր և օգտակար է ընթերցողների լայն շրջանակի համար, ստորև ներկայացնում են բժշկական պրակտիկայի ապացուցողականության աստիճանների սահմանումը:

Ներկայումս ապացուցողականության մակարդակների գնահատման առավել փարածված համակարգը հետևյալն է.

- **A աստիճան. «Պեպք է».** նվազագույնը մեկ պատահական ընտրանքի վրա հիմնված, բարձրակարգ վերահսկողությամբ իրականացված կլինիկական փորձարկում՝ անմիջականորեն վերաբերող տվյալ գործելակարգի թեմային (ապացուցողականության 1a և 1b մակարդակ):
- **B աստիճան. «Ցանկալի է».** լավ իրականացված կլինիկական հետազոտություն, սակայն առկա չեն պատահական ընտրանքի հիման վրա իրականացված կլինիկական հետազոտություններ: Հետազոտությունն անմիջականորեն վերաբերում է գործելակարգի թեմային (ապացուցողականության II կամ III մակարդակ). այսպեղ ներառվում է նաև ապացուցողականության I մակարդակն այն դեպքում, երբ հետազոտությունն անուղակիորեն առնչվում է գործելակարգի թեմային:

- **C աստիճան. «Թույլարժեքի է».** փորձագիտական խմբերի կամ փորձագետների կարծիքներ և/կամ հայտնի հեղինակությունների կլինիկական փորձ (ապացուցողականության IV մակարդակ) կամ այն դեպքում, երբ ապացուցողականության IIa, IIb կամ III մակարդակները հիմնված են անբավարար որակի հետազոտությունների վրա:

- **Կլինիկական պարզաճ պրակտիկա.** բուժման որոշակի մեթոդիկայի համար չկան փորձարարական հետազոտություններ կամ ինչ-ինչ պարզառոտներով հնարավոր չեն, սակայն մեթոդը լայն փարածում ունի, և տվյալ մեթոդի վերաբերյալ փորձագետների խմբում կա համաձայնություն: Այս դեպքում մեթոդին տրվում է Կլինիկական պարզաճ պրակտիկա (փորձ)/Good Clinical Practice GCP (հոմանիշ՝ Կլինիկական համաձայնություն) գործելակարգի մակարդակ:

Ինչո՞ւ 137: Բանն այն է, որ «Վարդանանց»-ի ընդհանուր ամբուլատոր պրակտիկայում հենց այդքան ավստորոշումներ են դրվում կլինիկա դիմաձ քաղաքացիների 96%-ի դեպքում: Գիտական տեսակետից՝ 96%-ը վիճակագրական նշանակալիության էտալոնն է: Այսինքն՝ բոլոր պրակտիկ նպատակների համար այս հավաքածուն կարելի է դիտարկել որպես թեև առաջին, սակայն համապարփակ ժողովածու:

Ինչո՞ւ է դա կարևոր: «Վարդանանց»-ը՝ որպես բժշկական բրենդ, երաշխավորում է բուժման միասնական որակ՝ անկախ կաթինետից, որտեղ պացիենտը մուտքի հրավեր է ստանում:

Միասնական գործելակարգերն ապահովում են ավստորոշման և բուժման միանման մոտեցում կոլեգիալ մակարդակով: Բոլոր որոշումներն ընդունվում են կլինիկական գիտաժողովներում, որտեղ



քննարկվում են ուղեցույցները: Նման մոտեցումը բացառում է սուբյեկտիվ մեկնաբանությունները, որոնք հղի են սխալներով ու բացթողումներով:

Գործելակարգերը միաժամանակ բժշկական կենտրոնի ղեկավարության համար որակի հսկողության գործիք են: Սա այն էտալոնն է, որի հետ պետք է համեմատվեն նաև պրակտիկայի դեպքերը:

Եվ, վերջապես, գործելակարգերը խթան են՝ ուղղված բժշկական գիտական մտքի ակտիվացմանը, յուրօրինակ հրավեր մասնագիտական բանավեճերի և հիմնավորված ընդդիմախոսության:

ԶԷ՝ որ արդյունքում շահում է հիվանդը:

Միթե բժշկի համար սա չէ բարձրագույն արժեքը:

Ոչ պակաս կարևոր գործոն է պացիենտի իրազեկվածությունը, թափանցիկությունը և ընդունված որոշումների կանխատեսելիությունը: Ճիշտ սպասումների ձևավորումը հանգեցնում է գոհունակության և բժշկի նկատմամբ վստահության բարձրացման, հետևաբար և՛ ապաքինման գործընթացում օրգանիզմի ներքին ռեսուրսների ներգրավմանը:

Առողջապահության ֆինանսավորման տեսանկյունից՝ ուղեցույցների և գործելակարգերի համատարած ներդրումը թույլ է տալիս խուսափել այնպիսի մանիպուլացիաներից, ինչպիսիք են գերախտորոշումը, կոլեգիալ կարուսելը, ինչը նշանակում է կանխել միջոցների ոչ ռացիոնալ վատնումը: Ինստիտուցիոնալ վճարողի համար հնարավորություն է ստեղծվում ճիշտ հաշվարկել բյուջեն:

Պացիենտը շահում է նաև ի հաշիվ բժշկի գործելատեղի մշտական թարմացման, նորարարություններին ինստիտուցիոնալ հետևման և ապացուցողական բժշկության տվյալներով ուղեցույցների տարեկան թարմացման շնորհիվ:

Համաշխարհային միտումների հետ համեմատումը, միջազգային բժշկական

պրակտիկայում ինտեգրվելու հնարավորությունը նոր մակարդակի է բերում բժիշկների գիտելիքները և լիովին չեզոքացնում է մեկուսացումը համաճարակների, փոխադրության թանկության և լեզվական խոչընդոտների պատճառով:

Այստեղ մենք չենք կարող չանդրադառնալ ստանդարտացված (ուղեցուցային) մոտեցման հակառակորդների հիմնական թեզիսներին և տողատակին պատասխանում ենք դրանց: Ուղեցույցների քննադատություն.

1. Գործնականում ախտորոշման և բուժման ուղեցույցների կիրառումը անբավարար է կամ սխալ:

Ուղեցույցների բացակայության կամ անբավարարության դեպքում բժիշկը միշտ իրավասու է գործելու իր հայեցողությամբ՝ հետազայում կլինիկական գիտաժողովին զեկուցելով և պաշտպանելով իր մոտեցումը՝ հաջորդիվ այն ոսկե ստանդարտում ներառելու հեռանկարով: Ինչ վերաբերում է ուղեցույցների սխալ լինելուն, ապա, մեր խորին համոզմամբ, կաբինետի լուրջան մեջ գրնվող մասնագետն պվելի հաճախ և երկար ժամանակ է մոլորության գերին, քան յուրաքանչյուր վիճահարույց դեպք քննարկող համախոհների խումբը:

2. Ուղեցույցները կարող են հանգեցնել բժշկական մտածողության նեղացման:

Երկմության դեպքում բժիշկը միշտ կարող է և պետք է կոլեգիալ քննարկման ներկայացնի կասկած հարուցող հարցերը: Միաժամանակ բժիշկը կարող է լինել ուղեցույցների կատարելագործման նախաձեռնողը: Դրանում է նրանց առավելությունը համալսարանական նստարանին ձեռք բերված սրատիկ գիտելիքների նկատմամբ:

3. Ուղեցույցներ գոյություն ունեն հիմնականում տարածված հիվանդությունների համար: Հազվադեպ հանդիպող հիվանդությունների համար, որպես կանոն, դրանք չկան:



Ուղեցույցներով չկարգավորվող պաթոլոգիաների թիվը փարեցփարի նվազում է: Այնուամենայնիվ, բացակայության դեպքում բժիշկը գործում է իր գիտելիքներին համապատասխան:

4. Հետազոտությունների առավելապես «դրական» կամ նշանակալի արդյունքների հրապարակման արդյունքում վիճակագրորեն թյուր կարծիք է ձևավորվում. բացասական արդյունքները հագվադեպ են հրապարակվում:

«Վարդանանց»-ի ուղեցույցները ներառում են ապացուցողական բժշկության ամենաբարձր կարգորհայի արժանազան գործելակարգեր, իսկ դա նշանակում է, որ հիմքում ընկած է առնվազն մեկ պատահական ընտրանքի վրա հիմնված, բարձրակարգ վերահսկողությամբ իրականացված կլինիկական փորձարկում, որն անմիջականորեն վերաբերում է փվյալ գործելակարգի թեմային (ապացույցների մակարդակ Ia և Ib):

Բժիշկների ազատ ստեղծագործելու թեզի ջատագովները պացիենտին առաջարկում են կուրորեն հուսալ հաջողությանը և հավատալ ապաքինմանը՝ անկախ

նրանից, թե սպիտակ խալաթով մարդը որ բուհում, քանի տարի առաջ, ինչ դասագրքերով և ինչ առաջադիմությամբ է խորացել բժշկական գիտության մեջ:

Մենք վստահ ենք՝ պացիենտը ոչ թե պետք է հավատա պահապան հրեշտակին, այլ հաստատ իմանա, որ իր ստացած բուժումը ճիշտ է:

«Վարդանանց» նորարարական բժշկության կենտրոնը ապացուցողական բժշկության՝ աշխարհի առաջատար մասնագետների հետ միասին դա ձեզ երաշխավորում է:

Գործելակարգերը շուտով հասանելի կլինեն նաև էլեկտրոնային ձևաչափով: Շնորհակալ կլինենք մեր բոլոր գործընկերներին և հետաքրքրված անձանց, ովքեր կուղարկեն իրենց կարծիքները կամ առաջարկները հետևյալ էլ. հասցեին՝ info@vardanants.am: Առաջարկներից լավագույնները կներառվեն մեր հաջորդիվ ժողովածուներում:

ԼԵՎՈՆ ԱԼԹՈՒՆՅԱՆ

«ԱԼԹՇԵԼԹ» հիմնադրամի և «Վարդանանց» ՆԲԿ-ի խորհրդի նախագահ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

- **Մարիամ Բաղդասարյանին՝**
բժիշկ-ներզատաբան, «Վարդանանց»
ՆԲԿ-ի Կլինիկա II-ի ղեկավար
- **Մարի Ղասաբօղլյանին՝**
բժիշկ-ներզատաբան, «Վարդանանց»
ՆԲԿ, ԱԱԻ թերապիայի ամբիոնի
ղասախոս
- **Անահիտ Ժամհարյանին՝**
բժիշկ-ակնաբույժ, «Վարդանանց»
ՆԲԿ
- **Լիլիթ Մարությանին՝**
բժիշկ-մանկաբույժ, «Վիզմոր
Կլինիկ», Իմունիզացիայի
ծառայության ղեկավար
- **Անահիտ Ղուկասյանին՝**
բժիշկ-մանկաբույժ, «Վարդանանց»
ՆԲԿ-ի մանկաբուժության
ծառայության ղեկավար
- **Հռիփսիմե Պողոսյանին՝**
բժիշկ-նյարդաբան, նեյրոֆիզիոլոգ,
«Վարդանանց» ՆԲԿ
- **Աստղիկ Սուջյանին՝**
բժիշկ-նյարդաբան, նեյրոֆիզիոլոգ,
«Վարդանանց» ՆԲԿ
- **Քրիստինե Հարությունյանին՝**
բժիշկ-ոռոպեդ, գաստրոէնտերոլոգ,
«Վարդանանց» ՆԲԿ
- **Անի Ալեքսանյանին՝**
բժիշկ-սրտաբան, «Վարդանանց»
ՆԲԿ

Այս աշխատանքը անհնարին կլիներ առանց Ձեր մասնագիտական բարձր որակների, ժամանակի և նվիրվածության: Կիսում եմ Ձեր ոգեշնչվածությունը և հպարտանում եմ համատեղ աշխատանքով:

Իրական ապացուցողական բժշկական նյութերը գովազդային, անորակ և կողմնակալ տեղեկատվական «աղմուկից» տարանջատելու միասնական նպատակից ելնելով՝ մենք կարողացանք իրոք լավ արդյունք ստանալ: Միասին որոնեցինք և գործնական կիրառման համար մշակեցինք 137 հիվանդությունների մասով միջազգային լավագույն բժշկագիտական փորձը: Մենք հաջողեցինք, քանի որ հստակ պատկերացնում էինք այս աշխատանքի վերջնանպատակը, կարևորությունը և իր գերակա շահառուներին՝ մեր սիրելի բժիշկ-կոլեգաներին ու պացիենտներին:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԳՈՅԱՆ

«Բուժում է Վարդանանցը» հավաքածուն ներառում է ապացուցողական բժշկության ամենաբարձր կատեգորիայի գործելակարգեր, ինչը նշանակում է, որ հիմքում է առնվազն մեկ պատահական ընտրանքի վրա հիմնված, խիստ վերահսկողությամբ իրականացված կլինիկական փորձարկում, որն անմիջականորեն վերաբերում է տվյալ գործելակարգի թեմային (ապացույցների մակարդակ Ia և Ib):

«Մենք վստահ ենք՝ պացիենտը ոչ թե պետք է հավատա պահապան հրեշտակին, այլ հաստատ իմանա, որ իր ստացած բուժումը ճիշտ է»:

Լևոն Ալթունյան

«Վարդանանց» ՆԲԿ խորհրդի նախագահ



Անճարես



ՎԱՐԴԱՆԱՆԾ
ՆՈՐԱՐԱՎԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ISBN 978-9939-0-4085-1



9 789939 040851